թի, որ բերում էին իրանց տներից: Այստեղ առաջին անգամ տեսայ, որ աշակերտները դասաւորած էին զանազան դասատներում, եւ իւրաքանչիւր դասատան մէջ վարժապետը պարապում էր բոլորի հետ միասին: Բայց տէր Թոդիկի դպրոցում, առանց ուշադրութիւն դարձնելու նրանց հասակի եւ ուսման աստիճանի վրայ բոլոր աշակերտներին անխտիր ածել էին մէկ սենեակում, ինչպէս ոչխարներին ածում են մէկ գոմի մէջ, եւ վարժապետը պարապում էր իւրաքանչիւրի հետ առանձին-առանձին, մէկը վայելչագրութեամբ էր զբաղոած, միւսը ընթերցանութեամբ, երրորդը վարժապետի կօշիկներն էր մաքրում, մի խօսքով, որքան աշակերտներ կային, նոյն թոով եւ բաժանմունքներ կային նոյն դասատան մէջ: Այստեղ առաջին անգամ տեսայ սեւ գրատախտակը, որի վրայ կաւիճով էին գրում: Առաջին անգամ տեսայ, որ աշակերտներին սովորեցնում էին առանց փայտի ու ծեծի: Այստեղ ֆալախկայ, ճիպոտներ, խրատելու քանոն եւ դրանց նման պատժական գործիքներ չկային:

Բոլոր դասատները այցելելուց յետոյ Հայրիկը մեզ տարաւ մի դահլիճ, որտեղ ես տեսայ զանազան հանքային վէմեր, չորացած միջատներ, գոյնզգոյն թիթեռներ եւ ամենամանր պողոճներ: Միեւնոյն դահլիճում կային զանազան բոյսեր ու ծաղիկներ, այնպէս լաւ չորացած, որ բնաւ չէին կորցրել իրանց ձեւը կամ գեղեցկութիւնը: Կային եւ մի քանի թռչունների պաճուճապատաններ, որոնք ինձ այնպէս էին թւում, որ կարծես թէ կենդանի լինէին:

— Այդ բոլորը մեր աշակերտների հաւաքածուն է, պարոն բժշկապետ, — ասաց Հայրիկը այնպիսի հրճոանքով, որ կարծես ինքն եւս ուրախանում էր իր սաների առաջին երեխայրիքի վրայ: — Նրանք երբեմն իրանց վարժապետների հետ փոքրիկ արշաւանքներ են կատարում մեր շրջակայ լեռների վրայ եւ բնութեան մէջ ծանօթանում են բնութեան հետ:

— Դա յառաջադիմութեան մի մեծ քայլ պէտք է համարել, Հայրիկ, — ասաց Ասլանը, — որ այստեղ, փոխանակ աշակերտներին զբաղեցնելու աստոածաբանական մթին խնդիրներով, սովորեցնում են բնական գիտութիւններ:

— Իմ համոզմունքն այն է, պարոն բժշկապետ, — ասաց Հայրիկը, — որ մեր մանուկների կրթութեան հետ պէտք է կապոած լինի եւ այն նպատակը, որ նրանք, բացի լաւ քրիստոնեայ լինելուց, դառնան ե՛ւ լաւ արհեստաւորներ, ե՛ւ լաւ հողագործներ: Մեր ժողովուրդը աղքատ է եւ սոված, նա հաց է պահանջում, պէտք է ուսումը միջոց տայ նրան իր ապրուստը հայթայթելու: Եւ հէնց այդ նպատակով՝ ես միացրի այդ դպրոցի հետ եւ երկրագործական բաժին, իսկ եթէ կը յաջողի ինձ, ժամանակով կաւելացնեմ եւ մի արհեստա-